ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՄԱԺՈՂՈ-ՎԸՐԴԱԿԱՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆերնանդո Կասալ Բերտոա
(Նոթինգհեմի համալսարան)
Դեկտեմբեր 2020

Նախապատրաստվելով 2021 թվականի սահմանադրական փոփոխություններին՝ Հայաստանը դիտարկում է ուղղակի քվեարկությամբ նախագահական ընտրության ինստիտուտը վերականգնելու նպատակահարմարությունը:

Համաժողովրդական քվեարկությամբ ընտրված նախագահի ինստիտուտը գուցե անմիջականորեն չհանգեցնի ժողովրդավարության փլուզմանը, սակայն այդ պարագայում միանշանակորեն կարող է վտանգել ժողովրդավարության առողջ կենսագործունեությունը:

Նախագահի ընտրությունը համաժողովրդական քվեարկությամբ անցկացնելը խոչընդոտում է կայուն և կանխատեսելի կուսակցական համակարգի կայացմանը, ինչը կենսական նախապայման է՝ հեռանկարում ժողովրդավարության կայացման համար:

FRIEDRICH EBERT STIFTUNG

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՄԱԺՈՂՈ-ՎԸՐԴԱԿԱՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆերնանդո Կասալ Բերտոա
(Նոթինգհեմի համալսարան)
Դեկտեմբեր 2020

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

2. ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎՏԱՆԳՆԵՐԸ 3

2.1 Կուսակցական համակարգի հատվածականությունը 3
2.2 Բևեռացման ավելացումը 4
2.3 Կուսակցությունների ապաինստիտուցիոնալացումը 5
2.4 Կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացումը 6
2.5 Ընտրական անկայունությունը 7
2.6 Ժողովրդավարության ցածր որակը 8

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 9

Օգտագործված գրականության ցանկը 10
Պատկերների ցանկ 11

1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անշուշտ՝ պատահական չէր, որ 2018 թվականի Թավշյա հեղափոխությունը տեղի ունեցավ սահմանադրական բարեփոխումներից հետո, որով անկախության հռչակումից հետո երկրի պատմության մեջ առաջին անգամ ներդրվեց խորհրդարանական համակարգ՝ հրաժարվելով նախագահի ընտրությունը համաժողովրդական քվեարկությամբ անցկացնելու ինստիտուտից (տե՛ս Casal Bértoa, 2015): Այդ գործընթացի շնորհիվ Հայաստանը, Մոլդովայի հետ միասին,[1] (վերջերս նրանց միացավ նաև Վրաստանը), դարձան Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Եվրոպայի միակ երկրները, որոնք վերացրեցին նախագահի ընտրությունը համաժողովրդական քվեարկությամբ անցկացնելու ինստիտուտը:

Պատահական չէ նաև, որ 2018 թվականի մարտին խորհրդարանի կողմից ընտրված անձը՝ գործող նախագահ Արմեն Սարգսյանը, ով միջազգայնորեն ճանաչված գործիչ է և ում կերպարը նվազ բևեռացնող է, քան Հայաստանի նախկին նախագահներինը, կարևոր դերակատարում ունեցավ Հեղափոխության հաջողության և երկրի հետագա ժողովրդավարացման գործընթացում:

Թեպետ կարելի է որոշ փաստարկներ բերել նախագահի ընտրությունը համաժողովրդական քվեարկությամբ անցկացնելու ինստիտուտը վերականգնելու օգտին (օրինակ՝ իշխանության հակակշռումը, ուղղակի ժողովրդավարությունը), ճշմարտությունն այն է, որ նախագահի ընտրության՝ համաժողովրդական քվեարկությամբ անցկացումն ավելի շատ պրոբլեմներ է ստեղծում, քան՝ լուծումներ: 2015 թվականի սահմանադրական բարեփոխումը միգուցե բազմաթիվ արատներ ուներ, սակայն սույն հայեցակարգային փաստաթղթում նկարագրված պատճառներն հաշվի առնելով՝ դրանց թվում չէին նախագահի ընտրության՝ համաժողովրդական քվեարկությամբ անցկացումը վերացնելը և խորհրդարանական համակարգ ստեղծելը:

---

1 Որը, սակայն, կրկին վերականգնվեց 2016 թվականի հոկտեմբերին:

2

ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Նախագահի ընտրությունն համաժողովրդական քվեարկությամբ անցկացնելու վտանգների և ժողովրդավարության ամրապնդման համար խորհրդարանական հանրապետության ընձեռած առավելությունների շուրջ բանավեճն անվերջ է: Այս թեմայով Լինցի (Linz) դարակազմիկ աշխատությունների հրապարակումից (1990) ի վեր բազմաթիվ աշխատություններ են գրվել այս թեմայի շուրջ, չհանգելով, սակայն, հստակ եզրակացության: Որոշ գիտնականներ համարում են, որ նախագահի ընտրությունն համաժողովրդական քվեարկությամբ անցկացնելը կարող է խոչընդոտել ժողովրդավարության ամրապնդմանը, երբ (1) ոչ նախագահական, ոչ կառավարական ճամբարները չունեն խորհրդարանական մեծամասնություն (այսինքն՝ պառակտված փոքրամասնական կառավարություն է), (2) նախագահն ու վարչապետը պատկանում են քաղաքական տարբեր ճամբարների (այսինքն՝ համակեցություն / կոհաբիտացիա), և (3) նրանց «երկակի գործադիր լեգիտիմությունը»[2] պատային իրավիճակ է ստեղծում, որում որոշումների կայացումն հայտնվում է փակուղու մեջ (Elgie, 2008): Միանշանակ է, սակայն, միայն մեկ բան (տես Elgie, 2011). այն ժողովրդավարությունները, որոնցում և՛ վարչապետը, և՛ կառավարությունը միասին պատասխանատու են թե՛ օրենսդիր մարմնի, թե՛ համաժողովրդական քվեարկությամբ ընտրված նախագահի առջև («նախագահ-վարչապետական» տիպի կիսանախագահական ռեժիմներ) ավելի խոցելի են փլուզման վտանգի առաջ, քան՝ նրանք, որոնցում վարչապետը և կառավարությունը պատասխանատու են միայն օրենսդիր մարմնի, և ոչ՝ համաժողովրդական քվեարկությամբ ընտրված նախագահի առջև («վարչապետ-նախագահական» ռեժիմ):

Այնուամենայնիվ, և անկախ նախագահի լիազորությունների վերաբերյալ բանավեճից (մանրամասնը՝ տես ստորև), պարզվել է, որ նախագահի ընտրությունն համաժողովրդական քվեարկությամբ անցկացնելը էական բացասական հետևանքներ է ունենում, մասնավորապես՝ ավելացնում է թե՛ ընտրությունների հատվածականությունն ու բևեռացումը՝ խոչընդոտելով կուսակցությունների և կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացմանը, թե՛ իջեցնում է ազատական (լիբերալ) ժողովրդավարությունների որակը: Ստորև հերթով կուսումնասիրենք դրանցից յուրաքանչյուրը:

2.1. Կուսակցական համակարգի հատվածականությունը

Նախագահական ընտրությունները կարող են նպաստել կուսակցական համակարգի հատվածավորմանը, որը կարող է բացասական հետևանքներ ունենալ կառավարության (կաբինետի) կայունության համար (Grotz and Weber, 2012), կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման համար (Casal Bértoa, 2012, 2016) և ժողովրդավարության կենսագործունեության համար (Sartori, 1976): Այսպես, հետազոտողներն հիմնավորել են, որ կուսակցությունների թիվն ավելի մեծ է այն պետություններում, որտեղ նախագահն ընտրվում համաժողովրդական քվեարկությամբ՝ մեծամասնական երկփուլ ընտրական համակարգով:[3] Դա պայմանավորված է այն փաստով, որ քանի որ նախագահական ընտրությունն ամենակարևոր իրադարձությունն է ցանկացած երկրի քաղաքական «օրացույցում»,[4] նախագահի պաշտոնի համար մրցակցությունն հանրայնորեն ավելի տեսանելի է դարձնում քաղաքական գործիչներին՝

2 Առաջինը՝ համաժողովրդական քվեարկությամբ ընտրվելու շնորհիվ, իսկ երկրորդը՝ խորհրդարանի աջակցությունը վայելելու շնորհիվ:

3 Ինչը տեղի է ունենում եվրոպական բոլոր ժողովրդավարական երկրներում, որտեղ անցկացվում են ուղղակի նախագահական ընտրություններ:

4 Նախագահական ընտրություններին ընտրողների մասնակցության ցուցանիշը սովորաբար ավելի բարձր է, քան՝ խորհրդարանական ընտրություններին, անգամ այն երկրներում, որոնցում նախագահը գրեթե չունի լիազորություններ (օրինակ՝ Չեխիա, Բուլղարիա) կամ ունի ոչ մեծ լիազորություններ (օրինակ՝ Լեհաստան, Լիտվա):

ՉԼՄ-ներում ավելի շատ լուսաբանվելու և նախընտրական քարոզչության շրջանակում կատարվող նվիրատվությունների շնորհիվ՝ ավելացնելով նրանց շանսերն ապագա խորհրդարանական ընտրություններում: Ավելին, «ընտրությունների երկրորդ փուլի ակնկալիքն ավելացնում է առաջին փուլում մրցակցելու շահագրգռվածությունը՝ կամ ամենաշատ ձայն հավաքած երկու թեկնածուներից մեկը լինելու հույսով, կամ ամենաշատ ձայն հավաքած երկու թեկնածուների հետ ընտրության երկրորդ փուլում ավելի բարենպաստ դիրքերից սակարկել կարողանալու համար» (Linz, 1994: 22):[5] Այս գործոնների (այսինքն՝ տեսանելիություն, քաղաքական սակարկություններ վարելու համար բարենպաստ դիրքեր) պատճառով՝ նախագահի ընտրությունն համաժողովրդական քվեարկությամբ անցկացնելը դրդում է հավակնոտ (շատ հաճախ նաև՝ անողոք) քաղաքական գործիչների, հաճախ նաև՝ երկրի քաղաքական կյանքի մեջ որևէ մասնակցություն չունեցած անձանց, նոր կուսակցություններ ստեղծել՝ բացառապես իրենց «անձնական» երազանքին հագուրդ տալու մտադրությամբ: Այս երևույթի բազմաթիվ օրինակներ կան Լեհաստանում (օրինակ՝ «Party X», «Kukiz'15»), Լիտվայում («Order and Justice»), Մոլդովայում («Party of Rebirth and Conciliation of Moldova»), Պորտուգալիայում («Democratic Renewal Party»), Սլովակիայում («Party of Civic Understanding», Movement for Democracy»), Չեխիայում («Party of Civic Rights), Ուկրաինայում («Strong Ukraine», «All Ukrainian Union Solidarity, «Servant of the People») և այլուր:

2.2. Բևեռացման ավելացումը

Ուղղակի նախագահական ընտրությունները, սակայն, ոչ միայն քաջալերում են նախագահական ընտրություններում «սև ձի» դառնալու ակնկալիք ունեցող նոր կուսակցությունների ձևավորումը, այլ նաև կարող են խորացնել թե՛ գաղափարաբանական և թե՛ քաղաքական բևեռացումը: Քաղաքական իսթեբլիշմենթին դեմ գնացող կուսակցություններին (օրինակ՝ կոմունիստներին, ազգայնականներին, պոպուլիստներին) հնարավորություն ընձեռելով անմիջական կոչերով դիմել հանրությանը և «ընտրվել որոշակի պաշտոններում կամ առնվազն հանրությանը բավարար չափով ներկայացնել իրենց դժգոհությունները՝ կապված իսթեբլիշմենթի հետ»՝ նախագահի ընտրությունն համաժողովրդական քվեարկությամբ անցկացնելը նպաստում է քաղաքական դաշտի մաս չկազմող ավտորիտար, ոչ ազատական ուժերի՝ առաջադիմական թեկնածուներին տրվող քվեների թվի ավելացմանը (Casal Bértoa and Rama, 2020: 13-14, 16): Դիտարկելով նախագահի ընտրությունն համաժողովրդական քվեարկությամբ անցկացնելու և քաղաքական իսթեբլիշմենթին դեմ գնացող կուսակցություններին (օրինակ՝ պոպուլիստներ, ծայրահեղական աջեր, ծայրահեղական ձախեր) տրվող քվեների մասնաբաժնի միջև հարաբերակցությունն Արևմտյան Եվրոպայի ժողովրդավարություններում 1848 թվականից ի վեր, նշված հեղինակները

5 Դրանից խուսափել կարելի է, օրինակ, անցկացնելով զուգահեռ խորհրդարանական և նախագահական ընտրություններ՝ նախագահական ընտրությունների համար օգտագործելով պլուրալիստական ընտրական համակարգ: Դա, սակայն, ավելի բնորոշ է Հյուսիսային և Լատինական Ամերիկայի նախագահական ռեժիմներին:

Գծապատկեր 1
Ուղղակի քվեարկությամբ նախագահական ընտրության ինստիտուտը և բևեռացման աստիճանը



Բևեռացումը (քվեների քանի տոկոսն է բաժին հասնում քաղաքական իսթեբլիշմենթին դեմ գնացող կուսակցություններին)

Ծանոթագրություն. ուղղակի քվեարկությամբ նախագահական ընտրության ինստիտուտ ունեցող պետությունները նշված են կարմիրով:
Աղբյուրը. Casal Bértoa (2020):

պարզել են, որ նախագահի ընտրությունն համաժողովրդական քվեարկությամբ անցկացնելու դեպքում ավելանում է բևեռացման հավանականությունը, որի ցուցանիշը վերը նշված կուսակցություններին տրվող քվեների տոկոսային մասնաբաժինն է, ընդ որում՝ այդ մասնաբաժինն ավելանում է գրեթե երկու կետով և կես տոկոսով՝ խորհրդարանական ռեժիմներում արձանագրվող ցուցանիշների համեմատությամբ (Casal Bértoa, 2019: 7): Գծապատկեր 1-ը, որում ներկայացված է բևեռացման մակարդակն Արևմտյան Եվրոպայի 19 կոնսոլիդացված ժողովրդավարություններում,[6] ակնհայտորեն ցույց է տալիս, որ ուղղակի քվեարկությամբ նախագահական ընտրության ինստիտուտ ունեցող պետությունները, որպես կանոն, շատ ավելի բևեռացված են, քան խորհրդարանական համակարգ ունեցողները: Իռլանդիան կարծես միակ բացառությունն է, սակայն չպետք է մոռանանք, որ (1) Իռլանդիան խորհրդարանական համակարգ ուներ մինչև 1940-ականների ավարտը (տես նաև ստորև՝ Գծապատկեր 2), և (2) քաղաքական իսթեբլիշմենթին դեմ գնացող կուսակցություններին տրվող քվեների մասնաբաժինը նախորդ փետրվարին շատ բարձր է եղել՝ հասնելով 27.2%-ի:[7]

Ավելին, հաշվի առնելով նախագահական մրցավազքի անձնավորված բնույթը և «հաղթողը ստանում է ամեն ինչ» տրամաբանությունը, ուղղակի քվեարկությամբ նախագահական ընտրություններն սրում են ընտրական մրցակցությունը երկու հիմնական թեկնածուների միջև, որը վատթարագույն սցենարի դեպքում կարող է «աղետալի մաշտաբի հասնող հրդեհի» վերածել (Casal Bértoa, 2017a): Ամենավառ օրինակներից է Վրաստանի վերջին նախագահական ընտրությունը, որը տեղի ունեցավ 2018 թվականին և որում հիմնական երկու կուսակցությունների (UNM և GD) միջև մրցակցության առանցքային ուղղությունը ոչ թե գաղափարաբանական էր, այլ՝ անձնավորված (Սաակաշվիլին ընդդ. Իվանիշվիլու):

2.3. Կուսակցությունների ապաինստիտուցիոնալացումը

Ուղղակի քվեարկությամբ նախագահական ընտրությունների վերոհիշյալ անձնավորված բնույթ,ը հենց կարող է քաղաքական առաջնորդներին հետ պահել, որպեսզի նրանք ներդրումներ չանեն սեփական կուսակցությունների ինստիտուցիոնալացման մեջ (Samuels and Shugart, 2010): Ուստի, ի տարբերություն խորհրդարանական հանրապետությունների նախագահների, ում կայացած խորհրդարանական կուսակցությունների աջակցությունն անհրաժեշտ է ընտրվելու համար, և ուստի՝ նրանք մեծապես շահագրգռված են կուսակցական «շինարարությամբ», համաժողովրդական ուղղակի քվեարկությամբ ընտրվող նախագահները որպես կանոն հանդես են գալիս «ես վեր եմ կուսակցական քաղաքականությունից» դիրքորոշմամբ (Meleshevich, 2007): Դա ոչ միայն ավելացնում է անհատապաշտությունը՝ նվազեցնելով «կուսակցական հարթակների և կուսակցական կառույցների նշանակությունը» (Samuels, 2002: 480), այլ նաև՝ կարող է բոնապարտիստական վարքագծի հանգեցնել, ինչը բնութագրվում է կուսակցությունները գործիքի վերածելու գործողություններով՝ դեմագոգիայի և պոպուլիզմի ակնհայտ միտումներով հանդերձ (Bahro et al., 1998:217): Այսօրինակ վարքագծի բազմաթիվ օրինակներ կան՝ Լուի-Նապոլեոնը՝ Ֆրանսիական 2-րդ Հանրապետության օրոք, Հինդենբուրգը՝ Վայմարյան Հանրապետության օրոք, Վալեսան Լեհաստանում, Պուտինը Ռուսաստանում, Յանուկովիչն Ուկրաինայում և բազմաթիվ այլք:

Ավելին, նախագահական մրցավազքի անձնավորված բնույթը որևէ երաշխիք և «բուֆեր» չի ընձեռում՝ ընդդեմ քաղաքական դաշտի մաս չկազմող և քաղաքական փորձ չունեցող կամ գրեթե չունեցող այն ուժերի՝ առաջադրանքների, որոնք փորձում են ընտրվել (Linz, 1994): Ինչպես ցույց են տալիս Շուստերի, Պակսասի և Զեմանսի նախագահական ընտրությունները Սլովակիայում (1998), Լիտվայում (2002) և Չեխիայում (2013), այդ անձինք կարող են վերջին որպեսի կուսակցություններ ստեղծել՝ նախագահի ընտրությանը մասնակցելու համար, հետևապես՝ նրանց համար շատ դժվար է հասարակության հետ ուժեղ կապեր ունեցող կուսակցություններ ձևավորել: Ավելին, հաջողության հասնելու դեպքում այդպիսի նախագահները որպես կանոն արհամարհում են սեփական կուսակցությունները, ինչը նպաստում է «փոքր և ոչ երկարակյաց կուսակցությունների ստեղծմանը, որոնք առավել հաճախ նախագահի թեկնածուների անձնական «տրանսպորտային միջոցներն» են, բայց ոչ՝ ավելին» (Cadoux, 2007: 96): Դա ակնհայտորեն հակադրվում է խորհրդարանական համակարգերում գործող նախագահների բնույթին, ովքեր սովորաբար երկարատև կարիերա ունեցող քաղաքական գործիչներ են, իսկ շատ դեպքերում՝ նաև կուսակցությունների (կամ իշխող, կամ ընդդիմադիր կուսակցության) երկար տարիների նախկին առաջնորդներ: Նրանց համար կուսակցություններն ակնհայտորեն շատ արժեքավոր են:

Երրորդը, թեպետ խթանների համակարգը խորհրդարանական ռեժիմում խրախուսում է կուսակցական կարգապահությունը, ուստի նաև՝ ուժեղ և ինստիտուցիոնալացված կուսակցությունների ձևավորումը, համաժողովրդական քվեարկությամբ նախագահի ընտրության ինստիտուտը կարող է նպաստավոր լինել մասնատումների (ֆակցիոնալիզմ) և ներկուսակցական պառակտումների համար՝ ամենածանր դեպքերում հանգեցնելով երկար ժամանակ գոյություն ունեցած կուսակցությունների քանդմանը: Մոլդովայի 1996 թվականի նախագահական ընտրու-

6 Եվրամիության 16 ժողովրդավարություններ, գումարած Նորվեգիան, Շվեյցարիան և Միացյալ Թագավորությունը:

7 Վերջին 3 խորհրդարանական ընտրություններում միջին մակարդակը եղել է մոտ 20%:

թյունը, երբ նախագահ Սնեգուրի, վարչապետ Շանգելիի և խորհրդարանի խոսնակ Լուչինսկու միջև առճակատումը (իսկ նրանք բոլորն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված էին PDAM կուսակցության հետ) ընտրություններում այդ կուսակցության աննախադեպ պարտության պատճառ դարձավ (կուսակցությունը, որը 1994 թվականին ստացել էր ձայների 43.2%-ը, 1998-ին ստացավ ընդամենը 3.6%-ը), ինչին հաջորդեց առանց այն էլ դյուրաբեկ քաղաքական համակարգի էլ ավելի թուլացումը:

2.4. Կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացումը

Վերջերս կատարված ավելի կարևոր մի ուսումնասիրության մեջ, որում դիտարկվել են եվրոպական ժողովրդավարությունները՝ 1848 թվականից ի վեր, Casal Bértoa-ն և Weber-ը (2020) պարզել են, որ այն պետություններում, որոնցում նախագահն ընտրվում է համաժողովրդական ուղղակի ընտրությամբ, կուսակցական համակարգը շատ ավելի պակաս կայուն է: Այսպես, ակնհայտորեն տարբերվելով խորհրդարանական հանրապետություններից, որոնցում նախագահն ընտրվում է իշխող գերմեծամասնության կողմից կամ կառավարության և ընդդիմության միջև փոխզիջման արդյունքում (օրինակ՝ Ալբանիա, Հունաստան, Հունգարիա), համաժողովրդական ուղղակի ընտրությամբ ընտրվող նախագահները, իրենց «սլաքներն» ուղղելով «ավելի լայն» ընտրազանգվածին,[8] կարող են շանտաժի ենթարկվել նոր և/կամ ծայրահեղական կուսակցությունների կողմից, որոնք մեծ ուրախությամբ նախագահական ընտրություններում իրենց ցուցաբերվող աջակցությունը կփոխանակեն պաշտոններ ստանալու շքեղության հետ: Լավագույն օրինակը, թերևս, Լեհաստանի 2005 թվականի խորհրդարանական ընտրություններն են, երբ հետկոմունիստական հիմնական թեկնածուի (Վլադիսլավ Ծիմոշեվիչի) թեկնածությունն հանելուց հետո Համերաշխության շարժմանն հաջորդած ժամանակահատվածի երկու թեկնածուների (Լեխ Կաչինսկու և Դոնալդ Տուսկի) միջև ծավալված անակնկալ առճակատման պատճառով կուսակցական համակարգն իննսուն աստիճանով շրջադարձ կատարեց և մրցակցության «հետկոմունիստականն ընդդեմ հակակոմունիստականի» մրցակցային համակարգից (որում Ժողովրդավարական ձախերի դաշինքը և Գյուղացիների կուսակցությունն ընդդիմանում էին Համերաշխություն-Ազատություն միությանը) վերածվեց «ազատականն ընդդեմ սոցիալականի» («Քաղաքացիական պլատֆորմը» ընդդեմ «Իրավունք և արդարություն» կուսակցության) կուսակցական բախման (Casal Bértoa and Guerra, 2018):

---

8 Եկե՛ք չմոռանանք, որ ուղղակի քվեարկությամբ նախագահական ընտրության կա կոնկրետ հաղթող և կոնկրետ պարտվող:

9 Դա զարմանալի չէ, քանի որ Իսլանդիայի նախագահական ընտրություններում կուսակցությունները գրեթե որևէ դեր չունեն (Kristinsoon, 1999):

Գծապատկեր 2

Կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացումը և նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրությունը



Ծանոթագրություն. ուղղակի քվեարկությամբ նախագահական ընտրության ինստիտուտ ունենալու ժամանակահատվածները կարմրացված են:
Աղբյուրը. Casal Bértoa and Weber (2020):

Գծապատկեր 2-ը, որում ներկայացված է նաև մրցակցության կառուցվածքի կայունության մակարդակն այն պետություններում, որոնցում նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտն ավելի ուշ փուլում է ներդրվել (այդ պետությունների անվանումները կարմրացված են), ակնհայտորեն ցույց է տալիս, թե ինչպես են կուսակցական համակարգեն ավելի կայուն այն դեպքում, երբ նախագահը չի ընտրվում համաժողովրդական ուղղակի ընտրությամբ: Այսպես, բացառությամբ մեկ պետության (այն է՝ Իսլանդիայի),[10] կուսակցությունները շատ ավելի կայուն և կանխատեսելի շփումներ (այսինքն՝ մրցակցություն, համագործակցություն, համադասավորություն) ունեն այն ժամանակահատվածներում, որոնցում տեղի չի ունենում նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրություն: Մոլդովան և միջպատերազմական շրջանի Պորտուգալիան՝ Եվրոպայի միակ պետությունները, որոնցում նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտը ներդրվել կամ վերացվել է երկու անգամ, ամենավառ օրինակներ են, թե ինչպես կարող է նախագահի ընտրությունը խոչընդոտել կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման գործընթացը:

Casal Bértoa-ն և Weber-ը (2020) պարզել են նաև, որ եթե նախագահն ընտրվում է համաժողովրդական ուղղակի ընտրությամբ, ապա կուսակցական համակարգերի անկայունությունն ուղիղ համեմատական կախվածության մեջ կլինի նախագահի ուժեղության աստիճանից: Դա ակնհայտորեն տեսանելի է Գծապատկեր 3-ում, որը ցույց է տալիս, թե ինչպես է նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտի բացասական ազդեցությունը կուսակցությունների կայունության վրա ավելանում յուրաքանչյուր անգամ, երբ նախագահին և մեկ լիազորություն է վերապահվում: Ուստի, պատահական չէ, որ Եվրոպայի միակ երեք կիսանախագահական ժողովրդավարական կուսակցական համակարգերը, որոնցում նախագահի լիազորություններն էապես կրճատվել են (այն է՝ Պորտուգալիա, Ուկրաինա և Վրաստան),[11] այդ կրճատումից հետո ավելի կայուն են դարձել:

Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ նախագահի լիազորությունները չեն խոչընդոտում կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացմանը, եթե նախագահը չի ընտրվում համաժողովրդական ուղղակի ընտրությամբ. դրանով հաստատվում է այն փաստարկը, որ կուսակցական համակարգի կայունության վրա բացասաբար ազդում է ոչ թե նախագահական ուժեղ ինստիտուտը՝ որպես այդպիսին, այլև՝ նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտը:

2.5. Ընտրական անկայունությունը

Բավական հետաքրքիր է այն հանգամանքը, որ պարզվել է, որ նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտը բացասական

10 Դա զարմանալի չէ, քանի որ Իսլանդիայի նախագահական ընտրություններում կուսակցությունները գրեթե որևէ դեր չունեն (Kristinsoon, 1999):

11 Վարչապետ-նախագահական բնույթի կիսանախագահական ինստիտուտ է ներդրվել համապատասխանաբար 1983, 2006 և 2013 թվականներին:

Գծապատկեր 3.
Նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտի մարգինալ ազդեցությունը կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման (այսինքն՝ կայացման) վրա, նախագահի լիազորությունների համադրությամբ



Աղբյուրը. Casal Bértoa and Weber (2020):

ազդեցություն ունի ոչ միայն համակարգի, այլ նաև՝ ընտրությունների մակարդակում, հատկապես՝ նորաստեղծ ժողովրդավարություններում: Այսպես, Epperly-ն (2011),[12] ինչպես նաև Andrews-ը և Bairett-ը (2014) պարզել են, որ հետկոմունիստական Եվրոպայում նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտի պատճառով ընտրողներն իրենց կուսակցական նախընտրությունները փոխում են ընտրությունից ընտրություն (ինչը կարող է ընտրական անորոշություն ստեղծել)՝ նպաստելով քաղաքական նոր ուժերի ստեղծմանը և ավելի անձնավորված և նվազ ծրագրային դարձնելով վերնախավի և ընտրողների շփումների գործընթացը: Դա տեղի է ունենում ոչ միայն Արևելյան Եվրոպայում, այլ նաև՝ Ասիայում, որտեղ կուսակցական 19 համակարգերում անցկացված 131 ընտրությունների շրջանում ընտրությունների տատանողականության երևույթի ուսումնասիրությամբ բացահայտվել է այդ նույն բացասական ազդեցությունը (Lee and Casal Bértoa, 2019): Ուստի, զարմանալի չէ, որ սակավաթիվ բացառություններով հանդերձ (օրինակ՝ Թայվան և Մոնղոլիա), ընտրազանգվածը շատ ավելի կայուն է այն պետություններում, որոնցում չկան նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրություններ, օրինակ՝ Ճապոնիայում, Մյանմարում, Շրի Լանկայում, Հնդկաստանում, Իսրայելում և Նեպալում (Գծապատկեր 4):[13]

2.6. Ժողովրդավարության ցածր որակը

Այնուամենայնիվ, այն փաստը, որ նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտը չի հանգեցնում ժողովրդավարության փլուզման, դեռևս չի նշանակում, որ այդ ինստիտուտը չի ազդում ժողովրդավարության կենսագործունեության վրա: Ահավասիկ, ուսումնասիրելով Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Եվրամիության 28 ժողովրդավարություններում քաղաքական իսթեբլիշմենթին դեմ գնացող կուսակցություններին ցուցաբերվող հանրային աջակցության վերելքի և ազատական ժողովրդավարության մակարդակի միջև առկա կապը, Rama-ն և Casal Bértoa-ն պարզել են, որ նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտը «բացասական ազդեցություն ունի ազատական ժողովրդավարության մակարդակի վրա» (2020: 398): Այս երևույթի ամենաթարմ օրինակն անկասկած Լեհաստանի 2020 թվականի նախագահական ընտրություններ են, որոնցում քարոզարշավի հիմնական թեման ԼԳԲՏ փոքրամասնությունների իրավունքների հրեշացումը (դեմոնիզացիան) էր (Zagórski and Casal Bértoa, 2020):

12 Նրա ուսումնասիրության մեջ ներառված է նաև Հայաստանը:

13 Աշխարհի ավելի քան 50 ժողովրդավարությունների ուսումնասիրության համանման արդյունքների համար տե՛ս Hunter et al. (2018):

Գծապատկեր 4.
Ընտրությունների տատանողականությունը Եվրասիայի, Հարավային Ասիայի և Հարավ-Արևելյան Ասիայի 19 ժողովրդավարություններում



Ծանոթագրություն. ուղղակի քվեարկությամբ նախագահական ընտրության ինստիտուտ ունեցող պետությունների անվանումները կարմրացված են:
Աղբյուրը. Lee and Casal Bértoa (2019):

3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի հեճուկս խարիզմատիկ գործիչներ ունենալու՝ հանրության ցանկությանը, փորձը ցույց է տվել, որ նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտն էական բացասական ազդեցություն ունի ժողովրդավարության որակի վրա, կուսակցությունների ինստիտուցիոնալացման վրա և շատ չհատվածավորված, չբևեռացված և ընտրություններ-ի շրջանում կայունություն դրսևորող կուսակցական համակարգի ձևավորման վրա:

Նույն տրամաբանությամբ, ինչպես ներկայացվեց վերևում, նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտը «հնարավորության պատուհան» է բացում, որը կարող է փոփոխությունների հանգեցնել միջկուսակցական մրցակցության կառուցվածքում՝ վերջինս նվազ կանխատեսելի և կայուն դարձնելով ժամանակի ընթացքում: Եթե հաշվի առնենք, որ կուսակցական համակարգի կայունությունն էական նշանակություն ունի ժողովրդավարության ամրապնդման համար (Mainwaring, 1999)՝ այն աստիճան, որ կուսակցությունների միջև մրցակցության, համագործակցության և համադասավորության գործընթացի որոշակի կանխատեսելիություն ապահովելը կարող է կանխել ժողովրդավարության փլուզումը (Casal Bértoa, 2017b), ապա կարող ենք տեսնել, թե ինչու է նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտի վերականգնումն Հայաստանում լրջորեն վտանգում քաղաքականապես կայուն ազատական ժողովրդավարություն կառուցելու հեռանկարները: Հատկապես եթե կյանքի է կոչվելու 2018-ի Հեղափոխության ոգին, այն է՝ խորհրդարանական ուժեղ ժողովրդավարության կայացումը՝ ներառյալ կայուն կուսակցական կառավարության գոյությունը:

Անշուշտ, ամեն բան կախված կլինի այն ինստիտուցիոնալ դաշտից, որում կարող է վերականգնվել նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտը: Ինստիտուցիոնալ որոշ համակարգեր (օրինակ՝ վարչապետ-նախագահ տիպի համակարգը, համաժամանկյա ընտրությունները, նախագահի ընտրության պլուրալիստական համակարգը) մյուսներից նվազ խնդրահարույց են: Այնուամենայնիվ, թեպետ այն ոչ միշտ է ավելի ժողովրդավարական կամ ավելի նպաստավոր՝ իշխանությունների միջև հակակշիռների ամրապնդման տեսանկյունից (օրինակ, համակեցության (կոհաբիտացիայի) կամ պառակտված փոքրամասնական կառավարությունների պարագայում), նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտն ավելի շատ ստեղծում է խնդիրներ, քան՝ լուծում: Այն աստիճանի, որ մտածելով այդ ինստիտուտի վերականգնման ջատագովների մասին, կարող ենք վերհիշել անգլիացի հայտնի գրող և փիլիսոփա Ջիլբերջ Չեսթերտոնի խոսքերը. «Նրանք ոչ թե լուծումը չեն կարողանում գտնել, այլև՝ խնդիրը չեն կարողանում տեսնել»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

Andrews, J.T. and Bairett, R.L. Jr. (2014): "Institutions and the Stabilization of Party Systems in the New Democracies of Central and Eastern Europe", Electoral Studies v. 33, pp. 307-321

Bahro, H., Bayerlein, B.H. and Vesser, E. (1998): "Duverger's Concept: Semi- Presidential Government Revisited", European Journal of Political Research, v. 34, n. 2, pp. 201-224

Cadoux, Ch. (2007): Semi-presidentialism in Madagascar, in Robert Elgie and Sophia Moestrup (eds.) Semi-presidentialism Outside Europe. London: Routledge

Casal Bértoa, F. (2020): Database on WHO GOVERNS in Europe and beyond, PSGo. Available at: whogoverns.eu

Casal Bértoa, F. (2019): "Polarization: What Do We Know About It And What Can We Do To Combat It?", Policy Brief No. 30. Tbilisi: Georgian Institute of Politics (GIP)

Casal Bértoa, F. (2017a): Party Politics and the Future of Democracy: Georgia in Comparative Perspective. Berlin: Democracy Reporting International (DRI)

Casal Bértoa, F. (2017b): "Political Parties or Party Systems? Assessing the 'Myth' of Institutionalization and Democracy", West European Politics, v. 40, n. 2, pp. 402-429

Casal Bértoa, F. (2016): "Party System Institutionalization: A Travelling Concept", in Ferdinand Müller-Rommel and Fernando Casal Bértoa (eds.), Party Politics and Democracy in Europe: Essays in Honour of Peter Mair. Abingdon/New York: Routledge

Casal Bértoa, F. and Enyedi, Z. (2016): "Party System Closure and Openness: Conceptualization, Operationalization and Validation", Party Politics, v. 22, n. 3, pp. 265-277

Casal Bértoa, F. (2015): "What Armenia Needs is Power Alternation", Civilnet. Available at https://www.civilnet.am/news/2015/10/26/what-armenia-really-needs-is-power-alteration/280253#.VqdLEcc_X-Z

Casal Bértoa, F. (2012): "Parties, Regime and Cleavages: Explaining Party System Institutionalization in East Central Europe", East European Politics, v. 28, n. 4, pp. 452-472

Casal Bértoa, F. and Guerra, S. (2018): "Earthquake or Hurricane? The Rise and Fall of Populist Parties in Poland", in Steven Wolinetz and Andrej Zaslove (eds.) Absorbing the Blow. Populist Parties and Their Impact on Parties and Party Systems. London/New York: Rowman and Littlefield

Casal Bértoa, F. and Rama, J. (2020): "Party Decline or Social Transformation? Economic, Institutional and Sociological Change and the Rise of Anti-Political-Establishment Parties in Western Europe", European Political Science Review, First View Online

Casal Bértoa, F. and Weber, T. (2020): "Presidential Elections and European Party Systems (1848-2019)". Manuscript under review

Elgie, R. (2011): Semi-Presidentialism: Sub-types and Democratic Performance. Oxford: Oxford University Press Elgie, R. (2008): "The Perils of Semi-presidentialism. Are They Exaggerated?", Democratization, v. 15, n. 1, pp. 49-66

Epperly, B. (2011): "Institutions and Legacies: Electoral Volatility in the Post-communist World", Comparative Political Studies, v. 44, n. 7, pp. 829-853

Hunter, L.Y., Bennett, D.J. and Robbins, J.W. (2018): "Destabilizing Effects of Terrorism on Party System Stability", Terrorism and Political Violence, v. 30, n. 3, pp. 503-523.

Grotz, F. and Weber, T. (2012): "Party Systems and Government Stability in Central and Eastern Europe", World Politics, v. 64, n. 4, pp. 699-670

Kristinsoon, G.H. (1999): "Iceland", in Robert Elgie (ed.), Semi-presidentialism in Europe. Oxford: Oxford University Press

Lee, D.S. and Casal Bértoa, F. (2019): "Is the Past Never Dead? Historical Legacies and Electoral Volatility in Asia since 1948", Paper presented at the 69th Annual Conference of the Political Studies Association (Nottingham, 15-17 April)

Linz, J.J. (1990): "The Perils of Presidentialism", Journal of Democracy, v. 1, n. 1, pp. 51–69

Linz, J.J. (1994): "Presidential versus Parliamentary Democracy: Does it Make a Difference?", in J.J. Linz & A. Valenzuela (eds.), The Failure of Presidential Democracy. Baltimore: Johns Hopkins University Press

Mainwaring, S. (1999): Rethinking Party Systems in the Third Wave of Democratization: The Case of Brazil. Stanford: Stanford University Press

Meleshevich, A. (2007): Party Systems in Post-Soviet Countries. New York: Palgrave

Rama, J. and Casal Bértoa, F. (2020) "Are Anti-Political-Establishment Parties a Peril for European Democracy? A Longitudinal Study from 1950 till 2017", Representation, v. 56, n. 3, pp. 387-410

Samuels, D.J. and Shugart, M.S. (2010): Presidents, Parties and Prime Ministers. Cambridge: Cambridge University Press Sartori, G. (1976): Parties and Party Systems. A Framework for Analysis, Volume I. Cambridge: Cambridge University Press

Zagórski, P. and Casal Bértoa, F. (2020): "Five Paradoxes Ahead of This Sundays Presidential Election in Poland", LSE Blog. Available at https://blogs.lse.ac.uk/europpblog/2020/06/27/five-paradoxes-ahead-of-this-sundays-presidential-election-in-poland/

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

4 Գծապատկեր 1
Ուղղակի քվեարկությամբ նախագահական ընտրության ինստիտուտը և բևեռացման աստիճանը

6 Գծապատկեր 2
Կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացումը և նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրությունը

7 Գծապատկեր 3
Նախագահի համաժողովրդական ուղղակի ընտրության ինստիտուտի մարգինալ ազդեցությունը կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման (այսինքն՝ կայացման) վրա, նախագահի լիազորությունների համադրությամբ

8 Գծապատկեր 4
Ընտրությունների տատանողականությունը Եվրասիայի, Հարավային Ասիայի և Հարավ-Արևելյան Ասիայի 19 ժողովրդավարություններում

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ֆերնանդո Կասալ Բերտոան Նոթինգհեմի (Միացյալ Թագավորություն) համալսարանի Միջազգային հարաբերությունների և Քաղաքագիտության դպրոցի ասոցացված պրոֆեսոր է: Նա հանդիսանում է «Կուսակցությունների և ժողովրդավարության ուսումնասիրության կենտրոնի», ինչպես նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ «Քաղաքական կուսակցությունների փորձագիտական հիմնական խմբի» համահիմնադիր, համագործակցում է միջազգային IDEA կազմակերպության հետ, միևնույն ժամանակ Վենետիկի հանձնաժողովի փորձագետ է:

Նրա աշխատությունները հրապարակվել են "Journal of Politics", "European Journal of Political Research", "Socilogical Methods and Research", "Electoral Studies", "West European Politics", "Party Politics", "Democratization" և այլ թերթերում: 2017թ.-ին արժանացել է Gordon Smith և Vincent Wright մրցանակներին, ինչպես նաև AECPA մրցանակին լավագույն հոդվածի համար, իսկ 2018թ.-ին՝ Նոթինգհեմի համալսարանի փոխնախագահի մեդալին «բացառիկ նվաճումների» համար:

ՀՐԱՊԱՐԱԿՈՂԻ ՄԱՍԻՆ

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի
հայաստանյան գրասենյակ
Մոսկովյան փողոց 31 / 0002 Երեւան

Պատասխանատու՝ Ֆելիքս Հեթթ
Տարածաշրջանային համակարգող
Հեռ՝ +374 10 53 69 13
http://www.fes-caucasus.org/

Հրապարակումները պատվիրել՝
info@fes.am

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի կողմից հրապարակված նյութերի կոմերցիալ օգտագործումը չի թույլատրվում

Հոդվածում արտահայտված կարծիքները պատկանում են բացառապես հեղինակին և կարող են չհամընկնել Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի պաշտոնական կարծիքի հետ: